

Բաց հասարակության հիմնադրամները, ակտիվորեն գործելով աշխարհի ավելի քան 70 երկրներում, օժանդակում են արդարադատության ու մարդու իրավունքների, խոսքի ազատության, հանրային առողջապահության և կրթության հասանելիության հարցում:

## ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

### Հայաստանի մարդու իրավունքների ազգային ցանցի մեկնարկ

Երբ Հայաստանում տեղի է ունենում մարդու իրավունքներին առնչվող մարտահրավերների աճ, խիստ կարևոր է, որպեսզի քաղաքացիական հասարակության անդամները սկսեն կոլեկտիվ, ներդաշնակեցված և համատեղ միջամտություններ՝ խախտումները մեղմելու համար: Թեև հանրապետությունում կան մի շարք իրավապաշտպան կազմակերպություններ, համատեղ ջանքեր շատ քիչ են գործադրվել, քանի որ կազմակերպությունները հաճախ ունենում են այնքան հնարավորություն, որ կարողանում են պարզապես իրականացնել առանձին միջամտություններ:

Շահերի պաշտպանության և հաղորդակցման թրեյնինգ Ադվերանում, հունիսի 22-24, 2011թ.



#### Այս համարում՝

- Հայաստանի մարդու իրավունքների ազգային ցանցի մեկնարկ
- ԲՀՀ-Հայաստանի և «Քաունթերփարթ ինթերնեյշնլի» համատեղ նախաձեռնությունների մեկնարկը
- KargiBerek.am-ը խթանում է քաղաքացիների և քաղաքի միջև կապը (լուսանկար 4)
- Հանրային քաղաքականության մշակման կրթաթոշակի նախաձեռնության մրցույթի երկրորդ փուլի հաղթողները

#### ՈԱԶՍԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- Երիտասարդ իրավաբանները մասնակցում են մարդու իրավունքների մասին ուսուցողական դասընթացներին

#### ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

- Հանրային հեռուստաընկերությունը խախտում է գովազդային օրենսդրությունը՝ դիտարկման արդյունքների համաձայն

#### ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ

- Տեղական բնամթերքով դպրոցական սննդի փորձարարական ծրագիրն օգտակար է երկու առումներով՝ օգնում է և դպրոցականներին, և սննդի տեղական արտադրողներին

#### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հայտ-առաջարկներ ներկայացնելու հրավեր. Լրատվամիջոցների ծրագիր



«Հայաստանի մարդու իրավունքների ազգային ցանցը» ստեղծվել է մտքում ունենալով հենց այս երկրներանքը: «Քաունթերփարթ ինթերնեշնալ-Հայաստան» կազմակերպության ֆինանսական աջակցությամբ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կողմից իրականացվող այս ծրագրի նպատակն է խթանել մարդու իրավունքների խախտումների կանխարգելման և նվազեցման հարցում համագործակցությունն ու կոլեկտիվ գործողությունները:

Հայաստանի քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացումը ԲՀՀ-Հայաստանի առաքելության հիմնաքարերից է: Վերջին տասը տարիների ընթացքում մեր աջակցության ուշադրության կենտրոնում է

Քննարկում Համընդհանուր պարբերական դիտարկման զեկույցի շուրջ Կոնգրես հյուրանոցում, հուլիսի 19, 2011թ.

եղել հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավվածությունը Հայաստանի ժողովրդավարացման գործընթացներում: «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը մեկնարկել է 2003 թվականին՝ որպես քաղաքացիական հասարակության անդամների միջև քննարկումների և բանավեճերի ֆորում՝ շրջակա միջավայրի դեգրադացիայից մինչև մարդու իրավունքների խախտումներին առնչվող հարցերի շուրջ:

Մարդու իրավունքների ցանցն ամրապնդում է այդ գործընկերությունը՝ հզորացնելով իրավապաշտպան կազմակերպություններին՝ համախմբելով նրանց քաղաքականության և շահերի պաշտպանության դաշտում և հնարավորություն ընձեռում համակարգելու նրանց գործունեությունը: Այն ստրատեգիկ կերպով միավորում է Հայաստանի հզոր իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության սկսնակ ակտիվիստներին՝ Հայաստանում մոնիտորինգի, հաշվետվությունների և իրավունքների պաշտպանության գործում իրավապաշտպան հանրության աշխատանքներն ամրապնդելու համար:

Չնայած վերջերս ձևավորված լինելուն՝ Ցանցն արդեն ակտիվ քայլեր է ձեռնարկել իր առաքելությունն իրականացնելու ուղղությամբ:

Խոշտանգումների կանխարգելման վերաբերյալ զեկույցի քննարկում Կոնգրես հյուրանոցում, սեպտեմբերի 9, 2011թ.



Հունիսի 22-ից 24-ը վերապատրաստման դասընթաց է կազմակերպվել ԲՀՀ-Հայաստանի կողմից՝ Ցանցի քարոզչական և հաղորդակցվելու կարողությունները հզորացնելու նպատակով: Քարոզչական և հաղորդակցվելու ռազմավարության հիմնական բաղադրիչները վերանայվել են և մշակվել են ուղերձներ՝ քարոզչության նպատակներին աջակցելու համար:

Մարդու իրավունքների ցանցի առաջին հանդիպումը տեղի ունեցավ հուլիսի 19-ին՝ Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ) գործընթացը 2010թ. ՀՀ ազգային զեկույցի բողոի ներքո քննարկելու նպատակով: Հանդիպման ընթացքում ձևավորվեց կառավարության կողմից ՀՊԴ առաջարկությունների իրականացման նկատմամբ համատեղ մոնիտորինգային աշխատանքների ընդհանուր տեսլական:

Սեպտեմբերի 6-ին, փորձելով ՀՀ Ազգային ժողովում խթանել քափանցիկությունն ու հաշվետվողականությունը, «Քաունթերփարթ ինթերնեշնլ-Հայաստանը» նախաձեռնեց Օրենսդրական օրակարգի քննարկման օր՝ Խորհրդարանի 2011թ. աշնանային նստաշրջանից առաջ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և պատգամավորների միջև աշխատանքային հանդիպումների կայացումը խթանելու համար: Մարդու իրավունքների

ցանցը առանցքային դեր էր խաղում ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի հետ հանդիպման ժամանակ: Ութ ՀԿ-ների ներկայացուցիչներ ներկայացրեցին առաջարկություններ մարդու իրավունքների պաշտպանության մասին ՀՀ օրենսդրությունը բարելավելու ուղղությամբ:

Ցանցի անդամների և համապատասխան անձանց կողմից սեպտեմբերի 9-ին ԽԿԿ (Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե) զեկույցի քննարկման ժամանակ ՀՀ կառավարության առջև բարձրացվեց նաև քաղաքացիական հասարակության օրակարգի մեկ այլ կարևոր հարց՝ իշխանությունների կողմից խոշտանգումների կանխումը փակ և կիսափակ հաստատություններում:

Առաջիկա ամիսներին ԲՀՀ-Հայաստանը կիրականացնի այս կարգի ավելի շատ գործողություններ: Մենք կշարունակենք ընդլայնել և ամրապնդել Մարդու իրավունքների ցանցը՝ փորձելով նույն թեմաների շուրջ աշխատող իրավապաշտպան կազմակերպությունների միջև համագործակցությունը դարձնել բնական և արդյունավետ գործընթաց:

## ԲՀՀ-Հայաստանի և «Քաունթերփարթ ինթերնեշնլ» համատեղ նախաձեռնությունների մեկնարկը

Վերջին երկու ամիսների ընթացքում, ԲՀՀ-Հայաստանը համագործակցում է «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության հետ բազմաթիվ հրատապ հարցերի և մի շարք ծրագրերի շուրջ: «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպությունը <<Հանրային քաղաքականության կրթաթոշակ>> նախաձեռնության շրջանակում ակտիվորեն ներգրավված է քաղաքականության անկախ հետազոտողներին աջակցելու հարցում: Չգտելով խրախուսելիք քաղաքականության առավել բարձրորակ և ստեղծագործական ուսումնասիրությունները՝ Քաունթերփարթը աջակցել է քաղաքականության հետազոտության և վերլուծության առաջին աշխատաժողովի անցկացմանը:

Բացի այդ, կազմակերպությունը միավորվել է ԲՀՀ-ի աշխատակիցների հետ՝ «Ի՛նչ ապագա ունի ժողովրդավարությունը և քաղաքացիական հասարակությունը» թեմայով միջազգային

համաժողովը համաֆինանսավորելու ու դրան մասնակցելու նպատակով: Այն քաղաքականության հետազոտողների և վերլուծաբանների, միջազգային դոնոր հանրության և տեղի քաղաքացիական հասարակության համար հարթակ կստեղծի ժողովրդավարության և մարդու իրավունքների չափանիշների տարածման համաշխարհային ընթացիկ միտումների մասին գոյաբանական և էմպիրիկ քննարկումների համար:


Քաունթերփարթը և ԲՀՀ Հայաստանը միասին աշխատում են նաև Հայաստանի Մարդու իրավունքների ազգային ցանցի «Կարգի բերեք» (FixMyStreet) նախաձեռնության և հանրային հեռուստառադիոընկերության Հ1 հեռուստաալիքի հաղորդումներում գովազդային ծավալների և զետեղման՝ օրենսդրությանը համապատասխանության մոնիտորինգի աջակցման ուղղությամբ:

# KargiBerek.am-ը խթանում է քաղաքացիների և քաղաքի միջև կապը

Հունիսի 1-ին Բաց հասարակության հիմնադրամը - Հայաստանը «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության և ԱՄՆ ՄՁԳ-ի հետ համատեղ մեկնարկել է «Կարգի բերեք» (FixIt) ծրագիրը: KargiBerek.am-ը Մեծ Բրիտանիայի «mySociety» ՀԿ-ի կողմից ստեղծված FixMyStreet-ի հարմարեցված տարբերակն է: Ակնկալվում է, որ կայքը կձևավորվի ու կսկսի աշխատել մինչև հոկտեմբերի սկիզբ և հնարավոր կլինի կայք մուտք գործել նաև FixMyStreet.am կայքից: Այս ծրագիրը հաջողությամբ իրականացվել է մի շարք երկրներում, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Նորվեգիայում և Վրաստանում:

KargiBerek.am-ի նպատակն է ստեղծել առցանց պլատֆորմ, որը կնպաստի քաղաքացիների և քաղաքային իշխանությունների միջև տեղի խնդիրների շուրջ ուղղակի հաղորդակցությանը: Այն թույլ է տալիս մարդկանց հայտնել իրենց հարևանությամբ ի հայտ եկող և իրենց վերաբերող խնդիրների մասին, քննարկել խնդիրները ուրիշների հետ և հետևել իշխանությունների արձագանքին: Ծրագիրը նաև ուղղված է ստեղծելու ակտիվ համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միջև: Տեղի խնդիրների շուրջ ժողովրդի մտահոգությունները պետական ոլորտում արտահայտելով՝ հույս ունենք, որ իշխանությունները կկարողանան ավելի արագ ու արդյունավետ կերպով միջոցներ ձեռնարկել և լուծել այդ խնդիրները:

KargiBerek.am-ի միջոցով համայնքի անդամները կարող են տեղի խնդիրների մասին իրազեկել իրենց քաղաքապետարաններին: Իրազեկումները տեղադրվում են քարտեզի վրա, որոնք կարող են դիտել և քննարկել այլ բնակիչներ, շահագրգիռ կողմեր և կառավարության ներկայացուցիչներ: Դրանք ավտոմատ կերպով ուղարկվում են համապատասխան մարմիններին, որպեսզի սկսվի պլանավորման գործընթացը: Ծրագիրը ավարտվում է քաղաքային իշխանությունների համար հատուկ մշակված



Նյութերը տեղադրվում են KargiBerek.am կայքում, որոնք կարող են քննարկվել համայնքի անդամների և տեղական իշխանությունների կողմից:

ծրագրային փաթեթով, որը տեսակավորում և կառավարում է KargiBerek.am պորտալի միջոցով ուղարկված իրազեկումները:

Հաջորդ երեք ամիսների ընթացքում ծրագիրը կիրականացվի երեք փորձարարական համայնքներում: Նախատեսված են կարողությունների զարգացման դասընթացներ տարբեր շահագրգիռ կողմերի, տեղական ՀԿ-ների և համայնքի ակտիվ անդամների համար: Համայնքային իշխանությունները կմասնակցեն տեղեկատվության կառավարման իրենց համակարգերին ավելացված նոր բաղադրիչների օգտագործման մասին ուսուցման դասընթացներին: Առաջին նյութերը քաղաքացիների կողմից կտեղադրվեն KargiBerek.am կայքին մինչև 2011թ. հոկտեմբերի վերջ: Փորձարարական ծրագրի հաջող ավարտից հետո նախատեսում ենք պորտալը շահագործել ողջ Հայաստանի համայնքներում:

# Հանրային քաղաքականության մշակման կրթաթոշակի նախաձեռնության մրցույթի երկրորդ փուլի հաղթողները

Հուլիսի սկզբին ԲՀՀ-Հայաստան Տնօրենների խորհուրդը հայտարարեց Հանրային քաղաքականության մշակման կրթաթոշակի նախաձեռնության մրցույթի երկրորդ փուլի հաղթողներին: Մրցույթին կարող էին մասնակցել քաղաքականության տարբեր ոլորտների հետազոտողներ, ովքեր ցանկանում էին իրականացնել ճշգրիտ և նորարարական ուսումնասիրություններ՝ բացահայտելու բաց հասարակություն դառնալու ճանապարհին առավել կարևոր մարտահրավերները և մշակելու գործնական լուծումներ:

Ընտրվել են յոթ հետազոտողներ, որպեսզի աշխատեն մի շարք կարևորագույն հարցերի շուրջ, որոնցից են՝ գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը, գենդերային ներկայացվածությունը հայկական դասագրքերում, տնտեսական ճգնաժամի սոցիալական ազդեցությունը, հանրային քաղաքականության փոխանցման հաջող ռազմավարությունները, Հայաստանում դիակիզարանների ներմուծումը, ինչպես նաև քննադատական մտածողությունը որպես հակամարտությունների կարգավորման գործիք:

Նախապատրաստումից մինչև հետազոտական աշխատանքների սկսվելը ԲՀՀ-Հայաստան կազմակերպությունը համագործակցել է «Քաունթերփարթ ինթերնեշնլե կազմակերպության հետ, որպեսզի մշակի Հանրային քաղաքականության հետազոտությունների և վերլուծությունների մասին աշխատաժողովը, որն անդրադառնում էր այնպիսի կարևոր թեմաների, ինչպիսիք են քաղաքականության հետազոտության փուլերը, հետազոտության մեթոդաբանությունը և քարոզչությունը: Սա կարևոր քայլ էր հետազոտողների շրջանում քաղաքականության հետազոտական կարողությունները բարելավելու և անկախ քաղաքականություն մշակողների հզորացման ուղղությամբ:

ԲՀՀ-Հայաստան և «Քաունթերփարթ ինթերնեշնլե կազմակերպությունները հոկտեմբերին կազմակերպում են մեկ այլ աշխատաժողով, որը հիմնականում նվիրված է հանրային քաղաքականության ձևավորման գործընթացի կառուցվածքին և քաղաքականության ձևավորման վրա ազդելու արվեստին:

## Երիտասարդ իրավաբանները մասնակցում են մարդու իրավունքների մասին ուսուցողական դասընթացներին

Որևէ կազմակերպության կողմից իրավունքների համակարգային կամ պարբերական խախտման մասին հաղորդում ստացվելուն պես՝ այն պետք է արագ ձևակերպվի որպես իրավական հիմնավոր գործ: Մա ռազմավարական հաջող դատավարությունների կարևորագույն քայլերից մեկն է: Մա մտքում ունենալով՝ ԲՀՀ-Հայաստան կազմակերպությունը ընտրել է գերակայություններ, որոնք նախատեսված են բարելավելու իրավապաշտպան ՀԿ-ների իրավական կարողությունները և գործող իրավաբանների շրջանում բարձրացնելու մարդու իրավունքների խախտումների մասին իրազեկությունը:

Նման նախաձեռնություններից մեկն էր հուլիսի 11-ից 14-ը տեղի ունեցած վերապատրաստման դասընթացը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համար գործերը պատրաստելու վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ռազմավարական

դատավարությանը: Մասնակցում էին տասնհինը երիտասարդ իրավաբաններ, որոնց մեծ մասը կամ աշխատում են ՀԿ-ներում, կամ մասնագիտանում են ռազմավարական դատավարության ոլորտում: Միջազգային պաշտպանության կենտրոնի ուսուցանող Օքսանա Պրեոբրաժենսկայան հարգված իրավաբան է, որը գրասենյակներ ունի Ստրասբուրգում և Մոսկվայում: Դասընթացը անդրադարձավ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի մի շարք ոլորտների, այդ թվում՝ ապրելու իրավունքին, խոշտանգումների արգելմանը և արդար դատավարության իրավունքին:

Ուսուցման երկրորդ փուլը նախատեսվում է կազմակերպել 2011թ. նոյեմբերի վերջին: Այս անգամ փորձագետ Պրեոբրաժենսկայային կմիանա Միջազգային պաշտպանության կենտրոնից մարդու իրավունքների հարցերով մեկ այլ ճանաչված իրավաբան՝ Կարինա Մոսկալենկոն:

## Հանրային հեռուստաընկերությունը խախտում է գովազդային օրենսդրությունը՝ դիտարկման արդյունքների համաձայն

Հուլիսի 28-ին Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ներկայացրեց հանրային հեռուստաընկերության գովազդային եթերաժամանակի դիտարկման նախնական արդյունքները: Այս շարունակական դիտարկման նպատակն է բացահայտել և հայտնել հանրային Հ1 հեռուստաընկերության կողմից օրենսդրության խախտումները: Սրանով «Ասպարեզը» հույս ունի կանխել հետագա չարաշահումները և խթանել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Այս նախաձեռնությանը աջակցում է Հիմնադրամը և «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագիրը, իսկ ֆինանսավորվում է ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից:

Ներկայումս Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբն իրականացնում է հանրային հեռուստատեսության ընդհանուր բովանդակության գովազդային եթերաժամանակի դիտարկում՝ տեսնելու, թե գովազդների ծավալն ու բաշխումը համապատասխանում է արդյո՞ք օրենսդրությամբ նախատեսվածին: Իրենց դիտարկումների հիման վրա նրանք կմշակեն մի շարք առաջարկություններ՝ ուղղված Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին (ՀՌԱՀ), հանրային հեռարձակողի ղեկավարությանը և Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդին (ՀՀՌԽ):

Նախորդ տարվա ընթացքում այս նախաձեռնության իրականացման մեկնարկը՝ 2010թ. դեկտեմբերի 31-ին, իրականացվեց

փորձարարական ծրագիր՝ դիտարկելու հանրային հեռուստատեսության գովազդային եթերաժամանակը: «Ասպարեզը» գրանցել է Հ1 հայկական հանրային հեռուստացանցի կողմից օրենքի խախտման բոլոր դեպքերը: ՀՌԱՀ-ի նախագահին ուղղված գրության մեջ նրանք տրամադրել են դիտարկման արդյունքների ամբողջական հաշվետվություն՝ խնդրելով կարգավորող մարմնին համապատասխան միջոցներ ձեռնարկել: Նամակը փոխանցվել է Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդին: Հետաքրքրական է, որ այս փոխանակման արդյունքում փոփոխություններ են կատարվել օրենսդրության մեջ՝ մեկ ժամում թույլատրվող գովազդի ժամանակը ավելացնելով 10-ից մինչև 14 րոպե:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանը մեկնաբանել է իրադարձությունների այս անսպասելի շրջադարձը, ասելով. «Գործելաճը օրենսդրությանը հարմարեցնելու փոխարեն՝ կարգավորող մարմինը նախընտրել է օրենսդրությունը հարմարեցնել ընթացիկ գործելաճին՝ ավելացնելով գովազդային թույլատրելի ժամանակը, որպեսզի այն համապատասխանի ներկայիս ծավալներին»: Նա շարունակեց. «Բացի այդ, մարտին և ապրիլին իրականացված դիտարկումներից պարզվել է, որ դիտարկված օրերի 90% դեպքերում Հ1-ի գովազդային ժամանակը գերազանցել է օրենքով թույլատրված 7%-ը»:

Դիտարկման գործընթացը շարունակվում է: Եկող ամիսների ընթացքում կլինեն միջանկյալ այլ զեկույցներ, իսկ վերջնական զեկույցը պետք է հրապարակվի 2012թ. մարտի վերջին:

## Տեղական բնամթերքով դպրոցական սննդի փորձարարական ծրագիրն օգտակար է երկու առումներով՝ օգնում է և դպրոցականներին, և սննդի տեղական արտադրողներին

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) հայաստանյան գրասենյակը ներկայում իրականացնում է դպրոցական սննդի ծրագիր, որը հովանավորվում է Ռուսաստանի կառավարության կողմից: Ծրագիրը իրականացվում է ի պատասխան դպրոցների վրա տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցության և սոցիալական ապահովության գուտ ծախսերի մասով բյուջետային սահմանափակումների: Սկսվելով 2010թ. սեպտեմբերին՝ ծրագիրը երեք տարվա ընթացքում հավասարակշռված սննդակարգով ուտելիք կտրամադրի աղքատ գյուղերի տարրական դպրոցի 50,000 աշակերտների: Ծրագրի երկարաժամկետ նպատակն է օգնել մշտական ազգային ,Դպրոցական սնունդէ ծրագրի ստեղծմանը:

ՊՀԾ և ԲՀՀ-Հայաստանը անցյալ տարվա ընթացքում մի շարք հանդիպումներ են ունեցել, որպեսզի մշակեն ԲՀՀ Հակաճգնաժամային հիմնադրամի ու «Դպրոցական սնունդ» ծրագրի միջև համագործակցության մեխանիզմ: Այս գործընկերության արդյունքում 2011 թվականի հուլիսին Հիմնադրամը տրամադրել է 100,000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհ ՄԱԿ-ի ՀՊԾ-ին՝ ,Դպրոցական սնունդէ ծրագրի շրջանակում հանրապետությունում աճեցված բնամթերքով սննդի (HGSF) փորձարարական ծրագրի

համար: Այս ծրագիրը դպրոցական սնունդն օգտագործում է որպես միջոց՝ խթանելու գյուղատնտեսական տեղական արտադրանքը՝ «Դպրոցական սնունդ» ծրագրի պահանջարկը կապելով տեղական արտադրողների առաջարկի հետ:

ԲՀՀ-Հայաստանի դրամաշնորհը, ՀՊԾ-ի 87.422 ԱՄՆ դոլար համաֆինանսավորման հետ միասին, հիմնականում կօգտագործվի 125 տոննա չորամրգային կեքսերի արտադրության համար, որոնք կբաժանվեն մարզերի մոտ 50 դպրոցներում, որտեղ թարմ ճաշեր պատրաստելու հնարավորություն չկա և, հետևաբար, ներգրավված չեն «Դպրոցական սնունդ» ծրագրում: Մոտ 6,500 աշակերտներ 2011-2012 ուսումնական տարվա ընթացքում ամեն օր կստանան այս կեքսերը:

Երբ «Դպրոցական սնունդ» ծրագիրը վերածվի կառավարության կողմից իրականացվող նախաձեռնության, տեղում աճեցված բնամթերքի ծրագիրը կմնա որպես ծրագրի մաս: Այն կշարունակի լինել արդյունավետ գործիք՝ Հայաստանում տնտեսական և ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությանը հակազդելու համար՝ միաժամանակ օգնելով աշակերտներին և տեղական բնամթերք արտադրողներին:

Հասցե՝ Թումանյան փ. 2-րդ փակուղի 7/1  
Ք. Երևան 0002, Հայաստան  
Հեռ. +37410 533462, 536758  
Էլ. փոստ: info@osi.am  
Վեբ կայք՝ www.osi.am  
www.partnership.am

